«ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՆՈՂ ԹԵԼԵՐԸ». ՀԱՅԱՑՔ ԴԵՊԻ ԶԱՐԳԱՑԱԾ ՏԵՔՍՏԻԼ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2024.3-33

Հիմնաբառեր. *տեքստիլ արդյունաբերություն, կառավարման համակարգեր, տեքստիլ արդյունաբերության պետական կառավարում, տեքստիլ քաղաքականություն, տեքստիլի կառավարման միջազգային փորձ, ներդրում, տեքստիլ արտադրանք*

Զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրների համար այս ոլորտը զբաղվածության և արտահանման կարևոր աղբյուր է: Տեքստիլ արդյունաբերության կառավարման միջազգային փորձը վկայում է համագործակցության, ստանդարտների և կանոնակարգերի սահմանման, մրցակցության և նորարարության խթանման, ինչպես նաև համաշխարհային առևտրի կանոնների պահպանման մասին: Այժմ հնարավոր չէ զարգացնել տեքստիլ արդյունաբերությունը՝ շրջանցելով համաշխարհային միտումները: Հետևաբար, կայունության և բնապահպանության նկատմամբ հետաքրքրության աճով պայմանավորված, ոլորտի կառավարումը պետք է տանել այդ ուղղվածությամբ:

ՀՀ-ում տեքստիլ արդյունաբերությունը զարգացնելու համար ոլորտի կառավարման համակարգի տարր պետք է դառնա ֆինանսական և ինստիտուցիոնալ աջակցության տրամադրումը փոքր և միջին ձեռնարկություններին՝ ներդրումներ կատարելով համապատասխան ուղղությամբ կրթության և վերապատրաստման, տեխնոլոգիաների զարգացման մեջ: Անհրաժեշտ է նաև կատարել մի շարք քայլեր՝ որակի միջազգային ստանդարտների որդեգրում, մասնակցություն տեքստիլի առևտուրը կարգավորող միջազգային համաձայնագրերին, որոնք կարող են ազդեցություն ունենալ տվյալ արտադրանքի ներմուծման և արտահանման վրա:

Թերեզա ՇԱՀՐԻՄԱՆՅԱՆ

ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը՝ «Պետական և մունիցիպալ կառավարում» մասնագիտությամբ, իսկ 2012 թ.՝ նույն մասնագիտության մագիստրատուրան և ստացել կառավարման մագիստրոսի աստիճան: 2012-2015 թթ. եղել է հակաճգնաժամային և զբոսաշրջության կառավարման ամբիոնի հայցորդ:

2013 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում:

Հեղինակ է 4 գիտական հրապարակումների, այդ թվում՝ մեկ մենագրության համահեղինակ:

https://orcid.org/0000-0001-8888-045X

Աշխարհի մի շարք երկրներ հայտնի են իրենց տեքստիլ արդյունաբերությամբ, որի հաջողության հիմնական գրավականը կառավար-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Տեքստիլի համաշխարհային արտահանման մեջ երկրների մասնաբաժինը, 2023 թ., %[1]

ման ճիշտ համակարգ ունենալն է: Տեքստիլ արդյունաբերության պետական կառավարումն ուղղված է ոլորտի կայունության և զարգացման, ինչպես նաև արտադրանքի անվտանգության և որակի ապահովմանը: Այս երկրները՝ տարբեր մասնագիտացումներով, ուժեղ կողմերով կարևոր դեր են խաղում տեքստիլի համաշխարհային շուկայում: Իսկ որն է նրանց ֆենոմենը կամ առաջմղման շարժիչ ուժը, և հատկապես ինչն է ուսանելի՝ մեր երկրի տեքստիլ արդյունաբերության հաջողության բանալին գտնելու առումով:

Զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրներից, ըստ համաշխարհային արտահանման մասնաբաժնի,



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրների արտահանման ծավալների շարժընթացը, 2019-2023 թթ., մլրդ ԱՄՆ դոլար[2]

[1] Հաշվարկները կատարվել են UN COME TRADE-ի տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/TradeFlow, https://www.tariffnumber.com/

[2] Հաշվարկները կատարվել են UN COME TRADE-ի տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/TradeFlow

աչքի են ընկնում Չինաստանը, Հնդկաստանը, Բանգլադեշը, Թուրքիան, Իտալիան, Վիետնամը, Պակիստանը, Բրազիլիան, Ֆրանսիան, Գերմանիան և Իսպանիան:

Տեքստիլի համաշխարհային շուկան 2023 թվականին գնահատվել է 1,837,27 միլիարդ ԱՄՆ դոլար, և ակնկալվում է, որ 2024-ից մինչև 2030 թվականը կաճի 7,4%-ով[3]:

Գծապատկեր 2-ից երևում է, որ վերջին 5 տարիներին գրեթե բոլոր առաջատար երկրներում 2023 թ.-ի ընթացքում նկատվել է արտահանման ծավալների աճ, բացառությամբ Չինաստանի, Թուրքիայի, Հնդկաստանի, Իսպանիայի: Առաջատարի արտահանման ծավալը վերջին տարվա ընթացքում նվազել է մոտավորապես 10,31%-ով, Թուրքիայինը՝ 9,09%-ով, Հնդկաստանինը՝ 11,76%-ով, Իսպանիայինը՝ 6,25%-ով:

Տեքստիլի արտահանմամբ աչքի ընկնող մնացած երկրներում արձանագրվել է արտահանման ծավալների աճ:

Անկախ արտահանման ծավալի նվազման հանգամանքից, 2023 թվականի ընթացքում Չինաստանն աշխարհի խոշորագույն տեքստիլ արտադրողներից մեկն է, և նրա կառավարման համակարգն արտացոլում է այս կարևոր դիրքը: Չինաստանի տեքստիլ արդյունաբերության համակարգը բնութագրվում է ներդրումների բարձր մակարդակով, նորարարությամբ և լայնածավալ արտադրությամբ ու տեսականիով[4]: Չինաստանի տեքստիլի շուկայի չափը 2024 թվականին գնահատվում է 55,80 միլիարդ ԱՄՆ դոլար, և ակնկալվում է, որ մինչև 2029 թվականը դա կհասնի 79,57 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ աճելով 7,35 %-ով[5]:

Տեքստիլ արդյունաբերությունը հնդկական տնտեսության կարևորագույն ճյուղերից է, և Հնդկաստանը, լինելով ոլորտի առաջատարներից, շարունակում է ակտիվորեն մշակել տեքստիլ արդյունաբերությունը զարգացնելու և այս ոլորտում որակն ու նորարարությունը բարելավելու ռազմավարություններ[6]: Հնդկաստանի տեքստիլի շուկայի չափը 2024 թվականին գնահատվում է 9,60 միլիարդ ԱՄՆ դոլար, և ակնկալվում է, որ մինչև 2029 թվականը դա կհասնի 15,36 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ 9,84% միջին տարեկան աճ ապահովելով[7]: Հնդկաստանը, բացի տեքստիլի և գործվածքների խոշոր արտադրող լինելուց, մասնագիտացած է նաև մի շարք տեքստիլ ապրանքների հումքի, այդ թվում՝ բամբակի, բրդի և մետաքսի արտադրության մեջ և նույնիսկ ունի համապատասխան՝ Տեքստիլի և բրդի նախարարություն:

Տեքստիլ արդյունաբերությունը Բանգլադեշի տնտեսական զարգացման էական գործոնն է: Այստեղ նույնիսկ գործում է նախարարություն: Բանգլադեշի տեքստիլ արդյունաբերության շուկայի չափը 2024 թվականին գնահատվում է 19,04 միլիարդ ԱՄՆ դոլար, և ակնկալվում է, որ մինչև 2029 թվականը կհասնի 25,25 միլիարդ ԱՄՆ դոլարի՝ աճելով 5,81%-ով[8]: Բանգլադեշը դարձել է հագուստի և տեքստիլ արտադրանքի խոշոր արտահանող՝ շնորհիվ էժան աշխատուժի և զարգացած ու բազմաշերտ համակարգի: Երկիրն ունի կենտրոններ և ուսումնական հաստատություններ, որտեղ պատրաստում են համապատասխան մասնագետներ, ներառ-

[3] Grand View Research. (2023). Textile Market Size, Share & Trends Analysis Report By Raw Material (Wool, Chemical, Silk), By Product (Natural Fibers, Polyester), By Application, By Region, And Segment Forecasts, 2024 - 2030. Retrieved from https://www.grandviewresearch.com/industry-analysis/textile-market

[4] Qingfen Zhang,Yuwen Zheng, Innovation Performance and Technical Innovation of Chinese Textile and Clothing Enterprises, April 2023, Journal of Innovation and Development 2(3):39-42 DOI: 10.54097/jid.v2i3.6926,LicenseCC BY 4.0,https://www.researchgate.net/publication/370218798_Innovation_Performance_and_Technical_Innovation_of_Chinese_Textile_and_Clothing_Enterprises

[5] Анализ размера и доли текстильного рынка Китая – тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/china-home-textile-market

[6] Amutha, D., PROBLEMS AND PROSPECTS OF INDIAN TEXTILE INDUSTRY (November 10, 2021). Available at SSRN: https://ssrn.com/abstract=3960734 or http://dx.doi.org/10.2139/ssrn.3960734

[7] Промышленность домашнего текстиля - в Индии Анализ размеров и долей - Тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/india-home-textile-markethttps://www.mordorintelligence.com/ru/industry-reports/india-home-textile-market

[8] Текстильная промышленность Бангладеш – анализ размера и доли – тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/bangladesh-textile-manufacturing-industry-study-market , https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/bangladesh-textile-manufacturing-industry-study-market

յալ դիզայներներ և ինժեներներ[9]:

Թուրքիան տեքստիլի և հագուստի խոշորագույն արտադրողներից մեկն է աշխարհում: Նա հայտնի է իր նորաձևության արդյունաբերությամբ և որակյալ տեքստիլ արտադրանքով: Թուրքիայի տեքստիլ արդյունաբերության շուկայի չափը 2024 թվականին գնահատվում է 17,77 միլիարդ ԱՄՆ դոլար, և ակնկալվում է, որ մինչև 2028 թվականը կաճի տարեկան 2,38%-ով[10]: Թուրքիան նաև տեքստիլագործական մեքենաների և սարքավորումների արտադրության կենտրոն է:

Իտալիան շարունակում է աշխարհում մնալ որպես տեքստիլի և նորաձևության առաջատարներից մեկը՝ ներկայացնելով որակի ու ոճի ակնառու չափանիշներ: Օրինակ՝ «Made in Italy» հայեցակարգը բարձր որակի և իտալական ոճի ցուցիչ է, և այս հանգամանքն օգնում է առաջ մղել իտալական տեքստիլ արտադրանքը համաշխարհային շուկաներում[11]:

Իտալիայի տեքստիլ շուկայի չափը 2023 թվականին հասել է մոտավորապես 25,67 միլիարդ ԱՄՆ դոլարի: Ենթադրվում է, որ 2024-2032 թթ. շուկան կաճի 3,3%-ով և մինչև 2032 թվականը կհասնի մոտ 34,29 միլիարդ ԱՄՆ դոլարի[12]:

Իտալիան ակտիվորեն աջակցում է ՓՄՁ-ներին տեքստիլի և նորաձևության ոլորտներում՝ օգնելով նրանց զարգանալ ու մրցակցել շուկայում[13]:

Վիետնամը դարձել է տարածաշրջանում տեքստիլի և հագուստի արտադրանքի խոշորագույն արտադրողներից մեկը: 2024 թվականին կանխատեսվում է, որ տեքստիլի շուկայում ավելացված արժեքը կկազմի 4,8 միլիարդ ԱՄՆ դոլար, ակնկալվում է 3,26% տարեկան աճի տեմպ 2024–2029 թթ.: Իսկ մեկ շնչի հաշվով ավելացված արժեքը կկազմի 48,6 ԱՄՆ դոլար[14]: Արդյունաբերության այս ճյուղը կարևոր դեր է խաղում Վիետնամի տնտեսական զարգացման մեջ՝ գրավելով ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների ուշադրությունը: Վիետնամը դարձել է մրցունակ տեքստիլ արտադրող՝ ներդրումներ ներգրավելով և զարգացնելով արտադրությունը[15]:

Ֆրանսիան, Գերմանիան և Իսպանիան նույնպես ունեն զարգացած տեքստիլ արդյունաբերություն՝ շեշտը դնելով նորաձևության և որակյալ արտադրանքի վրա: Այս երկրների տեքստիլ արդյունաբերության կառավարման համակարգը ներառում է տարբեր մարմիններ և գործակալություններ, որոնք կարգավորիչ և աջակցող դեր ունեն:

Թեև ֆրանսիական տեքստիլ արդյունաբերությունը վերջին տասնամյակներում որոշակի անկում է ապրել, սակայն շարունակում է մնալ երկրի տնտեսության նշանակալի հատվածը: Կանխատեսվում է, որ Ֆրանսիայի տեքստիլի շուկայում մեկ շնչի հաշվով ավելացված արժեքը կկազմի 37,6 ԱՄՆ դոլար՝ 2024 թվականին, և ակնկալվում է 0,81% տարեկան աճի բարդ տեմպ (2024–2029)[16]:

Գերմանիան համաշխարհային տեքստիլ արդյունաբերության առաջատար երկրներից մեկն է՝ արտադրելով բարձրորակ արտադրանք և հանդես գալով տեխնոլոգիական լուծումներով: Նախատեսվում է, որ 2024 թվականին տեքստիլի շուկայում ավելացված արժեքը կկազմի 5,1 միլիարդ ԱՄՆ դոլար, իսկ մեկ շնչի հաշվով ավելացված արժեքը՝ 61,7 ԱՄՆ դոլար: 2024–2029 թթ. ակնկալվում է 0,50% տարեկան աճի տեմպ[17]:

Տեքստիլ արդյունաբերությունը երկար

[9] Nurul Amin, Zhaobo Zhu, Fuhua Huang, The textile and clothing industry of Bangladesh in a global value chain perspective, Journal of the Asia Pacific Economy, Volume 25, 2020 - Issue 3, Pages 377-400

[10] Turkey Clothing Supplier & Export Statistics, https://www.tradeimex.in/blogs/turkey-clothing-suppliers-export#:~:text=The%20Turkish%20apparel%20market%20is,of%20%249.47%20billion%20in%202024.

[11] Roberta Orsi Landini, Anna Mattirolo, Maria Luisa Frisa, Italian Fashion: A Cultural History, Victoria & Albert Museum, 2017.

[12] Italy textile outlook, https://www.expertmarketresearch.com/reports/italy-textile-market#:~:text=The%20Italy%20textile%20market%20size,USD%2034.29%20billion%20by%202032.

[13] Giulia Ceriani Sebregondi, Irene Martínez Marín The Italian Fashion System": Bloomsbury Visual Arts, 2020

[14] Textiles – Vietnam, https://www.statista.com/outlook/io/manufacturing/material-products/textiles/vietnam#:~:text=Value%20added%20in%20the%20Textiles,to%20US%2448.6%20in%202024.

[15] Nguyen Van Thang, Ken'ichi Ohno, The Textile Industry in Vietnam: The Role of Government Policy in Industrial Development: Springer, 2013

[16] Textiles - France https://www.statista.com/outlook/io/manufacturing/material-products/textiles/france#:~:text=Value%20added%20in%20the%20Textiles,to%20US%2437.6%20in%202024.

[17] Textiles – Germany, https://www.statista.com/outlook/io/manufacturing/material-products/textiles/germany#:~:text=Value%20added%20in%20the%20Textiles,to%20US%2461.7%20in%202024.

Տեքստիլ արդյունաբերության նախարարություն (կամ համարժեք)	Առևտրի վարչություն (կամ համարժեք)	Ստանդարտացման կազմակերպություններ	Տեքստիլ արդյունաբերության ազգային ընկերակցություններ	Մաքսային և առևտրային մարմիններ
•Շատ երկրներ ունեն հատուկ նախարարություն կամ գործակալություն, որը պատասխանատու է տեքստիլ արդյունաբերության զարգացման և կարգավորման համար: Այս մարմինը կարող է սահմանել որակի չափանիշներ, մշակել արդյունաբերությանն աջակցելու քաղաքականություն և վերահսկել վերջինիս իրականացումը:	•Որոշ երկրներում տեքստիլ արդյունաբերությունը կարող է նաև կարգավորվել առևտրի վարչության կողմից, հատկապես տեքստիլ ապրանքների արտահանման և ներմուծման համատեքստում: Առևտրի վարչությունները կարող են սահմանել տեքստիլի միջազգային առևտրի կանոններ և պահանջներ:	•Տեքստիլ արդյունաբերության պետական կառավարման կարևոր մասն են կազմում ստանդարտացման կազմակերպությունները, որոնք մշակում և կիրառում են տեքստիլ արտադրանքի որակի և անվտանգության չափանիշները: Օրինակ է ASTM International-ը:	•Որոշ երկրներ կարող են ունենալ ազգային ընկերակցություններ կամ միություններ, որոնք աշխատում են կառավարության և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ աջակցելու և զարգացնելու տեքստիլ արդյունաբերությունը:	•Մաքսային և առևտրային մարմինները նույնպես կարևոր դեր են խաղում տեքստիլ արդյունաբերության կարգավորման, հատկապես տեքստիլ ապրանքների ներմուծման և արտահանման վերահսկման գործում:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Աշխարհում տեքստիլ արդյունաբերության տարածված պետական կառավարման համակարգերի հիմնական տարրերը

պատմություն ունի Իսպանիայում՝ նշանակալի դեր խաղալով երկրի տնտեսության մեջ: Իսպանական տեքստիլի և նորաձևության արդյունաբերությունը հայտնի է իր ոճով ու դիզայնով, և Իսպանիան մնում է համաշխարհային տեքստիլ արդյունաբերության կարևոր խաղացող: Նախատեսվում է, որ տեքստիլի շուկայում 2024 թվականին մեկ շնչի հաշվով ավելացված արժեքը կկազմի 41,1 եվրո, ավելացված արժեքը՝ 1,9 միլիարդ եվրո, իսկ 2024–2029 թթ. ակնկալվում է 1,01% տարեկան աճի տեմպ[18]:

Ինդոնեզիայի տեքստիլ շուկայի չափը 2024 թվականին գնահատվում է 13,83 միլիարդ ԱՄՆ դոլար: Տեքստիլ արդյունաբերությունն այստեղ արագորեն ընդլայնվում է, և ակնկալվում է, որ մինչև 2029 թվականը դա կհասնի 18,10 միլիարդ ԱՄՆ դոլարի, իսկ 2024-2029 թթ. կաճի 5,54%-ից ավելի[19]:

Վերոնշյալ երկրները, որպես կանոն, ունեն բարձր որակավորմամբ աշխատողներ, ժամանակակից արտադրական տեխնոլոգիաներ և մուտք դեպի համաշխարհային շուկա, բայց վերջիններիս հաջողության բանալին ոլորտի կառավարման ճիշտ համակարգի առկայությունն է: Վերջինս ներառում է տարբեր կազմակերպություններ, գործակալություններ, ընկերակցություններ, կառույցներ, որոնք պատասխանատու են արդյունաբերության կարգավորման և կառավարման համար, և այս խնդրին մոտենում են մասնագիտորեն, իսկ որ ամենակարևորն է՝ ունեն ոլորտի զարգացման քաղաքականություն (գծապատկեր 3):

Ընդհանրացնելով զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրների կառավարման համակարգի պատկերը՝ կարելի է առանձնացնել հետևյալ առանցքային տարրերը.

1. Տեքստիլ արդյունաբերության նախարարություն (MIT): Որոշ երկրներում այս գործառույթները վերապահվում են ճյուղային գործառնական մարմիններին, որոնք գործում են տնտեսական ուղղվածության նախարարությունների կազմում (օրինակ՝ Իտալիայում՝ Տնտեսական զարգացման նախարարության, Ֆրանսիայում՝ Էկոնոմիկայի, ֆինանսների և արդյունաբերության վերականգնման նախարարություն (Ministère de l'Economie, des Finances et de la Relance), Գերմանիայում՝ Տնտեսական հարցերի և էներգետիկայի նախարարություն (Bundesministerium für Wirtschaft und Energie):

2. Ընկերակցություններ և միություններ (օրինակ՝ Ֆրանսիայում՝ Տեքստիլ արդյունաբերության զարգացման ազգային ընկերակցություն՝ Association Nationale pour le Développement de l'Industrie Textile,

[18] Textiles – Spain, https://www.statista.com/outlook/io/manufacturing/material-products/textiles/spain
[19] Indonesia Textiles Market Size, https://www.mordorintelligence.com/industry-reports/indonesia-textiles-industry/market-size

ADEPTA և Union des Industries Textiles, UIT, որոնք ներկայացնում են Ֆրանսիայի տեքստիլ և նորաձևության արդյունաբերության ընկերությունների շահերը, Գերմանիայում՝ Տեքստիլի և հագուստի արդյունաբերության գերմանական ընկերակցություն (Gesamtverband der deutschen Textil- und Modeindustrie e.V., textil+mode)[20]:

3. Առևտրի և արդյունաբերության պալատներ (օրինակ՝ Ֆրանսիայում Chambres de commerce et d'industrie, CCI[21]):

4. Մասնագիտական խորհուրդներ (օրինակ՝ Ֆրանսիայի տեքստիլ խորհուրդը (Conseil National du Textile, CNT)[22]):

5. Հետազոտական կենտրոններ և գիտահետազոտական ինստիտուտներ (օրինակ՝ Հնդկաստանում՝ Հնդկական տեքստիլ տեխնոլոգիաների ինստիտուտը (IIT Delhi), Գերմանիայում՝ Հոսչուլեի Հռենոս-Վեստֆալիա-Լիպեի ինստիտուտը)[23]:

6. Որակի վերահսկման և ստանդարտացման մարմիններ (օրինակ՝ Չինաստանում՝ Ստանդարտացման, չափագիտության, որակի և վերահսկողության պետական վարչությունը (SAC)[24], Հնդկաստանում՝ Ստանդարտացման և որակի վերահսկման կոմիտեն)[25]:

7. Տեքստիլի արտահանման խորհուրդ (TEXPROCIL)[26] (օրինակ՝ Թուրքական տեքստիլի և հագուստի արտահանման խորհուրդը (ITHIB)[27]):

Զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրները մշակում են ազգային քաղաքականություն և ծրագրեր՝ աջակցելու տեքստիլ արդյունաբերության զարգացմանը: Կառավարությունը մշակում է տեքստիլ արդյունաբերությանն աջակցելու տարբեր սխեմաներ, ներառյալ սուբսիդիաները, վարկերը, ֆինանսավորման այլ ձևերը: Վերջին ժամանակներում հատկապես ուշադրություն է դարձվում կայուն և էկոլոգիապես մաքուր տեքստիլ արտադրանքի չափանիշների վրա: Կառավարությունները մշակում և կիրառում են օրենքներ ու կանոնակարգեր, որոնք կարգավորում են տեքստիլ արդյունաբերության աշխատանքային պայմանները, անվտանգության և բնապահպանական չափանիշները: Ուշադրություն է դարձվում արտադրության սոցիալական տեսանկյունին, այդ թվում՝ աշխատանքային պայմաններին և աշխատողների իրավունքներին, ներդրումներ են կատարվում տեքստիլ արդյունաբերության կրթության և վերապատրաստման մեջ՝ բարձրացնելու ոլորտի աշխատուժի հմտություններն ու կարողությունները, բարելավելու արտադրողականությունը:

Կառավարություններն ակտիվորեն ներդրումներ են կատարում նաև տեքստիլ արդյունաբերության թվայնացման և արտադրության մեքենայացման ուղղությամբ: Սա ներառում է այնպիսի ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործումը, ինչպիսիք են արհեստական բանականությունը և իրերի համացանցը:

Ամենակարևոր քայլը, որ կատարվում է վերոնշյալ երկրների կողմից, ակտիվ համագործակցությունն է միջազգային գործընկերների հետ և մասնակցությունը համաշխարհային առևտրային համաձայնագրերին (օրինակ՝ Եվրամիության և Վիետնամի ազատ առևտրի համաձայնագիրը (EVFTA), Անդրխաղաղօվկիանոսյան գործընկերության համաձայնագիրը (CPTPP)), որոնք հեշտացնում են սեփական տեքստիլ արտադրանքը համաշխարհային շուկաներում առաջ մղելու գործընթացը[28]:

Հայաստանն այնքան էլ հայտնի չէ հագուստի արտադրությամբ, բայց և այնպես, ունի հայտնի մոդելավորողներ, որոնք հաստատվել են համաշխարհային նորաձևու-

[20] Gesamtverband der deutschen Textil- und Modeindustrie e.V. https://www.textil-mode.de/
[21] La chambre de commerce et d'industrie (CCI) https://outil2amenagement.cerema.fr/outils/la-chambre-commerce-et-dindustrie-cci
[22] Баскаков, И. М. (2013). "Текстильная промышленность Франции в XXI веке: состояние и проблемы развития".
[23] Institut für Textiltechnik (ITA) der RWTH Aachen University. https://www.ita.rwth-aachen.de/
[24] Miao Zhang, Xin Xin Kong, Santha Chenayah, The Transformation of the Clothing Industry in China,December 2014,Asia Pacific Business Review 22(1), DOI: 10.1080/13602381.2014.990204,
[25] Amutha, D., PROBLEMS AND PROSPECTS OF INDIAN TEXTILE INDUSTRY (November 10, 2021). Available at SSRN: https://ssrn.com/abstract=3960734 or http://dx.doi.org/10.2139/ssrn.3960734
[25] Statutory Bodies, https://texmin.nic.in/about-us/statutory-bodies
[26] The Textile Industry in Turkey and Its Development Policies" Автор: Aytül Yavuz Источник: Sustainable Development: Concepts, Methodologies, Tools, and Applications, 2019, Pages 1578-1598
[27] The Manufacturing Research Group, Textiles and Clothing in Vietnam: A Strategic Entry Report, 1998 Icon Group International, Inc., 2000

թյան ասպարեզում, ներկայացնում են տարբեր ոճեր ու ոգեշնչված են ինչպես համաշխարհային նորաձևության միտումներով, այնպես էլ իրենց ազգային արմատներով և հաճախ մասնակցում են համաշխարհային նորաձևության ցուցադրությունների (օրինակ՝ Արմեն Կայրաթը): Կան նաև որոշ հաջողակ ընկերություններ (օրինակ՝ «Վարդանյան եղբայրներ», «ԱԼՄԱ», «Ջիովանի», «Krisp», «AnG» և այլն), որոնք զբաղվում են հագուստի և տեքստիլ արտադրանքի արտադրությամբ, առաջարկում են տարբեր ոճերի, գնային կատեգորիաների՝ սովորականից մինչև բարձրակարգ հագուստ, որը կարող է հասանելի լինել ինչպես ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում:

2024 թվականին Հայաստանի հագուստի շուկայում եկամուտը կհասնի 292,90 մլն ԱՄՆ դոլարի: Կանխատեսվում է, որ դա կունենա տարեկան 3,74% աճ (2024-2028 թթ.): Այս շուկայում ամենամեծ հատվածը կանանց հագուստն է, որի շուկայական ծավալը 2024 թվականին կազմում է 158,80 մլն ԱՄՆ դոլար: Ակնկալվում է, որ մինչև 2028 թվականը հագուստի շուկայի ծավալը կհասնի 34,2 միլիոնի: Հայաստանում տեքստիլ արդյունաբերությունը վերածնունդ է ապրում՝ կենտրոնանալով կայուն և էթիկական աղբյուրների վրա[28]: Հայաստանի մասնաբաժինը տեքստիլ և հագուստի ոլորտի արտահանման մեջ 225,16 մլն ԱՄՆ դոլար է, իսկ ներմուծման մեջ՝ 317,49 մլն ԱՄՆ դոլար: Հայաստանի տեքստիլ ոլորտը արտադրանք է արտահանում հիմնականում Ռուսաստանի Դաշնություն՝ 145,99 մլն ԱՄՆ դոլար (64,84%), Իտալիա՝ 145,99 մլն ԱՄՆ դոլար (64,84%), Գերմանիա՝ 30,33 ԱՄՆ դոլար (13.47%), Ղազախստան՝ 2.94 միլիոն ԱՄՆ դոլար (1.3%), Ֆրանսիա՝ 2.3 միլիոն ԱՄՆ դոլար՝ (1.02%): Հայաստանն ամբողջ աշխարհից տեքստիլ հագուստի արտադրանք է ներմուծում Թուրքիայից՝ մոտ 82,01 մլն ԱՄՆ դոլար (25,83%), Չինաստանից՝ մոտ 81,38 մլն ԱՄՆ դոլար (25,63%), Իտալիայից՝ մոտ 35,35 ԱՄՆ դոլար (11,14%), Բանգլադեշից՝ մոտ 11,82 միլիոն ԱՄՆ դոլար (3,72%), Գերմանիայից՝ մոտ 11,37 միլիոն ԱՄՆ դոլար (3,58%)[29]:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

Աշխարհում տեքստիլ արդյունաբերության տարածված պետական կառավարման համակարգերի հիմնական տարրերը

[28] Apparel – Armenia, https://www.statista.com/outlook/cmo/apparel/armenia
[29] Armenia Textile Business Statistics For All Country Import And Export Data, https://www.textileinfomedia.com/textile-industry-in-armenia

Այսպիսով, ուսումնասիրելով զարգացած տեքստիլ արդյունաբերություն ունեցող երկրների վարած քաղաքականությունը և կառավարման համակարգերը, կարելի է եզրակացնել, որ այս երկրներից յուրաքանչյուրում տեքստիլ արդյունաբերության կառավարման համակարգը նպատակ ունի զարգացնելու ոլորտը՝ անդրադառնալով դրան առնչվող բոլոր տեսանկյուններին, ներառյալ արտադրանքի որակը, ոլորտում զբաղվածների վերապատրաստումների ապահովումը, նորարարության և դիզայնի խթանումը, կանոնակարգերի և չափորոշիչների համապատասխանությունը, միջազգային առևտրային համաձայնագրերին մասնակցությունը: Կառավարման համակարգերն ունեն նեղ մասնագիտացված բնույթ, ինչը թույլ է տալիս ոլորտի խնդիրները լուծել ավելի արդյունավետ կերպով՝ ապահովելով շարունակական զարգացումը: Հետևաբար՝ ՀՀ տեքստիլ արդյունաբերության զարգացման գրավականը, նախ և առաջ, կառավարման համակարգի բարելավումն է: ՀՀ տեքստիլ արդյունաբերությունը զարգացնելու և կարգավորելու համար ճիշտ կլինի օգտագործել ոլորտի կառավարման մի շարք մեթոդներ ու մոտեցումներ (գծապատկեր 4):

Հատկապես ոլորտի կառավարման համակարգի տարր պետք է դառնա ֆինանսական և ինստիտուցիոնալ աջակցության տրամադրումը տեքստիլ արդյունաբերության փոքր և միջին ձեռնարկություններին՝ նպաստելու նրանց աճին ու զարգացմանը: Կառավարությունը պետք է ներդրումներ կատարի տեքստիլ արդյունաբերության կրթության և վերապատրաստման մեջ՝ բարելավելու աշխատուժի հմտությունները և այդ կերպ բարձրացնելու ոլորտի մրցունակությունը: Ինչպես նաև անհրաժեշտ է, տեխնոլոգիաների ոլորտի հետ մեկտեղ, ներդրումներ կատարել տեքստիլ արդյունաբերության թվայնացման և ավտոմատացման մեջ:

Շատ երկրներ ստեղծում են ազատ առևտրի գոտիներ՝ խթանելու տեքստիլ արտադրանքի արտահանումը: Դա նպաստում է արտահանման աճին և օտարերկրյա ներդրումների ներգրավմանը: Հաջորդ կարևոր քայլը որակի միջազգային ստանդարտներին ուշադրություն դարձնելն է, օրինակ՝ ISO և Oeko-Tex, որոնք կարևոր դեր են խաղում տեքստիլ արդյունաբերության կառավարման մեջ՝ օգնելով ապահովել արտադրանքի անվտանգությունն ու որակը: Այժմ, կայունության և էկոլոգիայի նկատմամբ հետաքրքրության աճով պայմանավորված, շատ երկրներ տեքստիլ արդյունաբերության մեջ էկոլոգիապես մաքուր նյութերի և տեխնոլոգիաների օգտագործման խիստ կանոնակարգեր և չափորոշիչներ են ներմուծում, հետևաբար՝ ժամանակին համընթաց տեքստիլ արդյունաբերություն ունենալու համար ոլորտի կառավարումը պետք է տանել այդ ուղղվածությամբ: Տեքստիլ առևտրի միջազգային համաձայնագրերին միանալը կարող է նույնպես ազդեցություն ունենալ տեքստիլ արտադրանքի ներմուծման և արտահանման վրա: Պարբերաբար պետք է մասնակցել ոլորտի միջազգային ցուցահանդեսներին և տոնավաճառներին, որոնք օգնում են առաջ մղել երկրի արտադրանքը համաշխարհային շուկայում և հաստատել գործարար կապեր:

Կարևոր հանգամանք է նաև այն, որ Հայաստանը նախկինում ունեցել է զարգացած տեքստիլ արդյունաբերություն, հետևաբար՝ այդ ներուժն առկա է, և ոլորտի կառավարման լավ համակարգի ներդրմամբ հնարավոր է ապահովել ոլորտի վերածնունդը և զարգացումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Amutha, D. (2021, November 10). Problems and prospects of Indian textile industry. SSRN. https://ssrn.com/abstract=3960734 or http://dx.doi.org/10.2139/ssrn.3960734
2. Apparel – Armenia, https://www.statista.com/outlook/cmo/apparel/armenia
3. Armenia Textile Business Statistics For All Country Import And Export Data, https://www.textileinfomedia.com/textile-industry-in-armenia Anonymous. (2020)
4. Blas, A. (2020). The competitiveness of the Spanish clothing industry: Behavior of clothing companies in Valencia. Fashion and

Textile Management: The Role of the Textile and Clothing Industry in the Spanish Economy. Retrieved from https://www.theseus.fi/bitstream/handle/10024/163437/Blas_Antonia.pdf?sequence=2&isAllowed=y
5. Fashion and textile management: The role of the textile and clothing industry in the Spanish economy. Retrieved from https://study.com/academy/lesson/textile-industry-in-spain.html
6. Giulia Ceriani Sebregondi, G., & Irene Martínez Marín. (2020). The Italian Fashion System. Bloomsbury Visual Arts.
7. Hendra, G. (n.d.). Industrial policy and development in Indonesia: A study of the textile and garment industry. Retrieved from https://magazine.datatex.com/the-new-indonesian-textile-industry
8. Italy textile outlook, https://www.expertmarketresearch.com/reports/italy-textile-market#:~:text=The%20Italy%20textile%20market%20size,USD%2034.29%20billion%20by%202032
9. La chambre de commerce et d'industrie (CCI) https://outil2amenagement.cerema.fr/outils/la-chambre-commerce-et-dindustrie-cci
10. Miao, Z., Xin, X. K., & Santha, C. (2014). The transformation of the clothing industry in China. Asia Pacific Business Review, 22(1). DOI: 10.1080/13602381.2014.990204. https://www.researchgate.net/publication/269808614_The_Transformation_of_the_Clothing_Industry_in_China
11. Mielke, H., & Kühl, R. (2013). Handbuch Textilmanagement: Grundlagen — Konzepte — Praxis. Springer Gabler.
12. Musleh-Ud Din, M. (2018). Textile industry in Pakistan: The challenges of emerging industrial structure. LAP Lambert Academic Publishing.
13. Nazir Ahmad, M. (2013). Textile industry and trade policies in Pakistan: A comparative analysis. LAP Lambert Academic Publishing.
14. Nguyen, V. T., & Ohno, K. (2013). The textile industry in Vietnam: The role of government policy in industrial development. Springer.
15. Nurul Amin, Z., Zhaobo, Z., & Fuhua, H. (2020). The textile and clothing industry of Bangladesh in a global value chain perspective. Journal of the Asia Pacific Economy, 25(3), 377-400.
16. P. V. VIDYASAGAR. (2008). Handbook of Textiles. MITTAL PUBLICATIONS.
17. Qingfen, Z., & Yuwen, Z. (2023). Innovation performance and technical innovation of Chinese textile and clothing enterprises. Journal of Innovation and Development, 2(3), 39-42. DOI: 10.54097/jid.v2i3.6926.
18. Rafael L. Teixeira, João A. Furtado, & Renato C. Simões. (2018). The Brazilian textile and apparel industry in a global context. Springer.
19. The Manufacturing Research Group. (2000). Textiles and clothing in Vietnam: A strategic entry report. Icon Group International, Inc.
20. Yavuz, A. (2019). The textile industry in Turkey and its development policies. In Sustainable Development: Concepts, Methodologies, Tools, and Applications (pp. 1578-1598).
21. Анализ размера и доли рынка домашнего текстиля во Вьетнаме – тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/vietnam-home-textile-market
22. Анализ размера и доли текстильного рынка Китая – тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/china-home-textile-market
23. Баскаков, И. М. (2013). Текстильная промышленность Франции в XXI веке: Состояние и проблемы развития.
24. Промышленность домашнего текстиля - в Индии Анализ размеров и долей - Тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/india-home-textile-market
25. Текстильная промышленность Бангладеш – анализ размера и доли – тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/bangladesh-textile-manufacturing-industry-study-market
26. Текстильная промышленность Италии – анализ размеров и долей – тенденции роста и прогнозы (2024–2029 гг.) Source: https://www.mordorintelligence.com/ru/industry-reports/italy-textile-manufacturing-industry-study-market

Тереза ШАГРИМАНЯН
Администратор исследовательского центра «Амберд», АГЭУ

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

ПРЯДУЩИЕСЯ НИТИ УСПЕХА: ВЗГЛЯД НА СТРАНЫ С РАЗВИТОЙ ТЕКСТИЛЬНОЙ ПРОМЫШЛЕННОСТЬЮ

Для стран с развитой текстильной промышленностью текстильная промышленность является важным источником занятости и доходов от экспорта. Международный опыт управления текстильной промышленностью в этих странах предполагает сотрудничество, установление стандартов и правил, содействие конкуренции и инновациям, а также соблюдение правил глобальной торговли. Сейчас невозможно развивать текстильную отрасль, оставаясь в стороне от мировых тенденций. Следовательно, в связи с растущим интересом к устойчивому развитию и защите окружающей среды, управление сектором должно вестись в этом направлении. В целях развития текстильной промышленности РА предоставление финансовой и институциональной поддержки малым и средним предприятиям текстильной промышленности должно стать элементом системы управления отраслью, осуществлять инвестиции в образование и обучение работников текстильной промышленности, в развитии технологий также необходимо принятие международных стандартов качества, участие в международных соглашениях, регулирующих торговлю текстилем, что может оказать влияние на импорт и экспорт текстильной продукции.

Ключевые слова: *текстильная промышленность, системы управления текстильной промышленностью, государственное управление текстильной промышленностью текстильная политика, международный опыт управления текстильной промышленностью, инвестиции, текстиль, продукт*

Tereza SHAHRIMANYAN
Administrator of the «Amberd» Research Center, ASUE

MARKETS AND COMPETITION

SPINNING THREADS OF SUCCESS: A LOOK AT COUNTRIES WITH DEVELOPED TEXTILE INDUSTRIES

For countries with developed textile industries, this sector serves as an important source of employment and export earnings. The international experience of managing the textile industry in those countries involves cooperation, setting standards and regulations, promoting competition and innovation, and complying with global trade rules. Now it is impossible to develop the textile industry by staying isolated from global trends. Therefore, due to the growing interest in sustainability and environmental protection, the management of the sector should be led in that direction. In order to develop the RA textile industry, the provision of financial and institutional support to small and medium-sized enterprises of the textile industry should become an element of the management system of the sector making investments in education and training of the textile industry, in the development of technologies. Additionally, it is also necessary to adopt international quality standards, participate in international agreements regulating textile trade, which may have an impact on the import and export of textile products.

Keywords: *textile industry, textile industry management systems, state management of textile industry, textile policy, international experience of textile management, investment, textile products*